ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Գրաց, Ավստրիա - 23-29 Հունիս 1997)

1997 թվականի հունիսի 23-29-ը Եվրոպայի գրեթե բոլոր եկեղեցիների (կաթոլիկ, անգլիկան, ուղղափառ, բողոքական, հին կաթոլիկ ևն) ու հարանվանությունների ավելի քան 700 պատգամավորներ և ավելի քան 10000 հրավիրյալ մասնակիցներ հավաքվել էին Ավստրիայի Գրաց քաղաքում՝ Եվրոպական Երկրորդ Էկումենիկ Համաժողովին, որը կազմակերպվել էր Եվրոպական եկեղեցիների խորհրդի և Եվրոպական Եպիսկոպոսների (կաթոլիկ) խորհրդի միասնական ջանքերով։

Իր տեսակի մեջ եզակի այս համաժողովն առաջին անգամ գումարվեց Բազելում 1989 թվականին, երբ Եվրոպան կանգնած էր նոր հեղափոխիչ իրադրության և մեծ ցնցումների շեմին։ Այն ժամանակ, սակայն, ոչ ոքի մտքով չէր անցնում, որ Եվրոպան մեկ անգամ ևս պատերազմների և արյունահեղության թատերաբեմ կդառնա։ Անցնող ութ տարիների ընթացքում Եվրոպայի տարբեր մասերում բռնկվեցին զինված բախումներ, որոնք երբեմն ընդունեցին «էթնիկ մաքրագործման» բնույթ, որը բացարձակապես նոր էր այս մայրցամաքի վերջին տասնամյակների պատմության համար։ Մյուս կողմից թեև Բեռլինի պատի փլուզումով «երկաթյա վարագույրը» պատռվեց, սակայն այն փոխարինվեց «արծաթյա վարագույրով», որը Եվրոպան բաժանեց սոցիալապես երկու անհավասար ճամբարների, որով և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Եվրոպաների առճակատումը դեռ շարունակվում է։

Այս պատճառով էլ համաժողովը նշանարան էր ընտրել «Հաշտություն - Ստեղծ պարգև և նոր կյանքի աղբյուր» կարգախոսը։ Ավելի քան 160 եկեղեցիներ ներկայացնող պատգամավորներն ու հրավիրյալները յոթ օր շարունակ որոնեցին ու շոշափեցին ուղիներն ու ձևերը՝ եկեղեցական մակարդակի վրա դիմագրավելու «երրորդ աշխարհի» կախվածության, բնապահպանական, ընկերային արդարության, աղքատության, մարդկային իրավունքների և ռասիզմի հարաճուն հիմնահարցերին։ Մասնակի ուշադրության արժանացան հակամարտող կողմերի եկեղեցիների կամ կրոնների ներկայացուցիչների կատարած ջանքերի վերլուծությունն ու արժևորումը։

Ժողովի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ հունիսի 23-ին եեհ նախագահ Ջոն Առնոլդի (Անգլիկան եկեղեցի) և կեեհ նախագահ, Պրագայի արքեպիսկոպոս կարդինալ Միրոսլավ Վլկի համատեղապետությամբ։ Համաժողովին ներկա էին և իրենց ողջույնի խոսքն ասացին Առաջին համաժողովի համատեղապետեր Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ն և Միլանի արքեպիսկոպոս կարդինալ Կառլո Մարիա Մարտինին։ Կարդացվեցին նաև Հովհաննես-Պողոս Բ Պապի և Բարթողոմեոս Ա Պատրիարքի ուղերձները։ Առաջին նիստը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի և կարդինալ Էչեգարայի աղոթքով։

Ժողովի բացմանը հաջորդած աղոթքի արարողությանը իր ողջույնի խոսքն ունեցավ նաև Ավստրիայի Հանրապետության նախագահ Թոմաս Կլեստիլը։

Հաջորդ լիագումար նիստին հիմնական զեկուցումով հանդես եկավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ն։ Իր ելույթի մեջ Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ այսօր բոլոր եկեղեցիները կիսում են միևնույն ընդհանուր և անխուսափելի պարտավորությունը՝ իրենց ներդրումն ունենալ «միության, հավասարության և մարդկային կյանքի պայմանների բարելավման տեսլականի մեջ»։ Վեհափառի ելույթը մեծ արձագանք գտավ ներկաների մեջ, որոնք բազմիցս ծափահարություններով արտահայտեցին իրենց հիացմունքն ու համերաշխությունը։

Նիստից հետո Վեհափառը մամուլի ասուլիս ունեցավ, որտեղ ի մասնավորի չեշտեց Հայ Առաքելական Եկեղեցու մասնակի կարևոր ու եզակի դերը Հայաստանի Հանրապետության հոգևոր վերաշինության ասպարեզում։

Հաջորդ օրերին պատգամավորները բաժանվեցին աշխատանքային 30 խմբերի, որոնք քննարկումներ ունեցան յոթ հիմնական թեմաների շուրջ։ Քննարկումների արդյունքները յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվեցին լիագումար նիստին, որն էլ երկօրյա քննարկումներից հետո հաստատեց ինչպես ժողովի «Պատգամը», այնպես էլ հիմնական աշխատանքային փաստաթուղթն ու Եկեղեցիների ապագա գործունեության ուղենիշները։

Աշխատանքային խմբերի քննարկումներն ընդհատվում էին երկխոսություններով, ունկնդրություններով, քննարկումներով և մշակութային միջոցառումներով։

Համաժողովն ավարտվեց հունիսի 28-ի փակման սքանչելի արարողությամբ Գրացի քաղաքային զբոսայգում։

Այս մեծ համաժողովին իր աշխույժ և գործնական մասնակցությունը բերեց նաև Հայ Առաքելական Եկեղեցու պատվիրակությունը՝ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ։ Պատվիրակության կազմում էին Հունաստանի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան արք. Գալփաքյանը, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանը, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի միաբան Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, տիկին Բեատրիս Իփեճյանը և օր. Անահիտ Սիմոնյանը։

ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԺԱ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Գրաց, Ավստրիա - 30 Հունիս-4 Հուլիս 1997)

Ավստրիայի Գրաց քաղաքում ս/թ. հունիսի 30-ից հուլիսի 4-ը գումարվեց Եվրոպայի Եկեղեցիների Խորհրդի ԺԱ համաժողովը։ Համաժողովի նպատակն էր քննարկել նախորդ համաժողովից (Պրագա, 1992) առ այսօր Խորհրդի կենտրոնական կոմիտեի կատարած աշխատանքները և ընտրել նոր կենտրոնական կոմիտե։ Համաժողովի հատուկ ուշադրության կենտրոնում էին նաև նոր ավարտված Եվրոպական Երկրորդ էկումենիկ համաժողովի արդյունքները։

Բացման արարողությունից հետո սկսվեցին լիագումար նիստերը, որոնց ընթացքում ընթերցվեցին Եկեղեցիների պետերի ողջույնի խոսքերը։ Հաշվետու զեկուցումով հանդես եկավ ԵԵԽ գլխավոր քարտուղար Ժան Ֆիշերը։ Ապա նախագծային ելույթ ունեցավ նորընտիր քարտուղար Ֆիլո Կլեմենցը։

Ինչպես լիագումար նիստերում, այնպես էլ աշխատանքային խմբերում և կոմիտեներում մտքերի լայն փոխանակություն ծավալվեց Եվրոպայի Եկեղեցիների առջև ծառացած հիմնահարցերի շուրջ։

Հաստատվեցին ԵԵԽ-ի առաջիկա ֆինանսական և վարչական գործունեության ուղենիշները, ընտրվեցին կկ նոր անդամները։

Համաժողովի աշխատանքներին իր մասնակցությունը բերեց նաև Հայ Առաքելական Եկեղեցու պատվիրակությունը, որի կազմում էին Հունաստանի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան արք. Գալփաքյանը, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի միաբան Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը և օր. Անահիտ Սիմոնյանը։ Ոսկան արք. Գալփաքյանը ընտրվեց կենտրոնական կոմիտեի կազմում։

Մ. Ծ. Վ. Ա.